ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ 11.02.2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԲԱՆԱՎԵՃ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

04.02.2017 12:28

Հարգելի փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների 11.02.2017 թվականի ընտրությանն առաջադրված խորհրդի անդամի թեկնածուներ **Հարություն Հարությունյանի, Հրանտ Անանյանի, Վրեժ Խաչիկյանի, Արմեն Ֆերոյանի, Տարոն Սիմոնյանի, Արայիկ Ղազարյանի, Սեդրակ Ասատրյանի, Տիգրան Խուրշուդյանի, Կարեն Սարդարյանի և Կարեն Մեժլումյանի** ներկայացրած դիմումները հաշվի առնելով,

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 20.01.2017թ. թիվ 10-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2017 թվականի փետրվարի 11-ի ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման գործընթացում օժանդակություն ցուցաբերելու մասին» **կարգի** համաձայն, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը կազմակերպում է **ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների 11.02.2017 թվականի ընտրությանն առաջադրված թեկնածուների բանավեճ-քննարկում, որը տեղի կունենա 2017 թվականի փետրվարի 8-ին, ժամը 12:00-ին՝ «Կոնգրես» համալիրի մեծ դահլիճում** (ք. Երևան, Իտալիայի փողոց 1, 1-ին հարկ, Մեծ դահլիճ):

Բանավեճ-քննարկմանը հրավիրվում են ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների 11.02.2017 թվականի ընտրությանն առաջադրված խորհրդի անդամի բոլոր թեկնածուները, ինչպես նաև բոլոր փաստաբանները:

<u>Բանավեճ-քննարկման անցկացման կանոնները՝</u>

1. Վարողը (կնշանակվի ՀՀ փաստաբանների պալատի կողմից), կներկայացնի թեկնածուներին և ազգանվան այբբենական հերթականությամբ արտահայտվելու հնարավորություն կտա բանավեճ-քննարկմանը ներկա գտնվող թեկնածուներից յուրաքանչյուրին: Յուրաքանչյուր թեկնածուին կտրվի 5 րոպե ժամանակ ելույթի համար: Ելնելով մասնակիցների քանակից վարողը կարող է բոլոր թեկնածուների ելույթների համար սահմանել ավելի կարճ ժամանակ: Ելույթները չեն կարող ընդհատվել:

2. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ներկայացուցիչները կգրանցեն հարց տալու ցանկություն հայտնած փաստաբաններին, և կներկայացնեն վարողին:

3. Վարողն՝ ըստ գրանցման հերթականության, կիրավիրի ամբիոնի մոտ հարց տալու ցանկություն հայտնած փաստաբանին: Յուրաքանչյուր փաստաբան հնարավորություն է ունենալու տալ մեկ հարց:

4. Հարցերին թեկնածուները կարող են պատասխանել հետևյալ կերպ՝

ա) եթե տրված հարցն ընդհանուր է, ապա այդ հարցին պատասխանում են բոլոր թեկնածուները հետևյալ հերթականությամբ՝ ազգանվան այբբենական կարգով՝ այն պայմանով, որ հաջորդ ընդհանուր հարցին առաջինը պատասխանելու է հաջորդ թեկնածուն,

բ) եթե հարցը վերաբերում է կոնկրետ թեկնածուին, ապա այդ հարցին պատասխանում է կոնկրետ թեկնածուն:

5. Արգելվում է բանավեճ-քննարկման ժամանակ ռեպլիկներ անել, վիրավորել թեկնածուներին կամ մյուս փաստաբաններին:

6. Վարողը պետք է հետևի, որ ներկաները պահպանեն սույն կարգը, իսկ վիրավորական հարցերը վարողի կողմից պետք է հանվեն:

7. Հանդիպումը կարող է ձայնագրվել և/կամ տեսաձայնագրվել:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

Առաջարկվող նորություններ

22.12.2016 ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.01.2017 ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ 11.02.2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15.01.2017 11.02.2017Թ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐՄԱՄԲ ԿԱՄ ԻՆՔՆԱՌԱՋԱԴՐՄԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ 15.01.2017Թ ԴՐՈՒԹՅԱՄԲ

16.01.2017 11.02.2017Թ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐՄԱՄԲ ԿԱՄ ԻՆՔՆԱՌԱՋԱԴՐՄԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ 16.01.2017Թ ԴՐՈՒԹՅԱՄԲ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })